**«Կենսաբանության միջազգային օլիմպիադա» ծրագրի բովանդակային հաշվետվություն (01.01.2022-31.03.2022)**

| Հ/Հ | Համառոտ բովանդակություն | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները | Վերջնաժամկետը | Կատարված է |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մշակված խնդիրների փորձարկում: Մասնակիցներին տրամադրվելիք պարագաների ձեռքբերում: | Սարքավորումների, նյութերի պարագաների ձեռքբերում, խնդիրների փորձարկում | Փորձարկված խնդիրներ և մասնակիցներին տրամադրվող որոշ պարագաներ | 31 դեկտեմբերի 2022թ. | 1. Կնքվել են պայմանագրեր 38 անուն նյութերի, պարագաների, սարքավորումների համար: Կնքվել են պայմանագրեր տրանսպորտային, հյուրանոցային ծառայությունների, ինչպես նաև բացման արարողության համար նախատեսված հոլոգրամի և անիմացիայի ծառայությունների համար: Ստացել ենք 42 անուն ապրանք:<br><br>2. Լրամշակվել է 66 տեսական խնդիր: Մշակվել է ընդհանուր առմամբ 120 խնդիր:<br><br>3. Կենսաբանության միջազգային օլիմպիադայի միջազգային կոմիտեի կողմից ստեղծված հատուկ պորտալում տեղադրելու համար պատրաստվել են մի շարք փաստաթղթեր՝ պաշտոնական հրավեր ԿՄՕ ասոցիացիայի բոլոր անդամ պետություններին, օլիմպիադայի մասնակից աշակերտների համար մասնակցության և օլիմպիադայի կանոններին համաձայնության հայտարարագրեր:<br><br>4. Մասնակցության հրավերն ուղարկվել է Կենսաբանության միջազգային օլիմպիադայի ասոցիացիայի 78 անդամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պետություններին և որպես դիտորդ մասնակցել ցանկացող 11 երկրների:<br><br>5. Գրանցվել է 71 երկիր որպես մասնակից և 3 երկիր՝ որպես դիտորդ:<br><br>6. 48 երկիր գրանցել է իր մասնակիցներին: Գրանցման վերջնաժամկետն էր ապրիլի 7-ը:<br><br>7. Մասնակցության վճարը փոխանցել է 5 երկիր (վճարը փոխանցելու վերջնաժամկետն է ապրիլի 30-ը):<br><br>8. Աշխատանքներ են կատարվել ծրագրի տեսական փուլի անցկացման և գնահատման ծրագրային ապահովում ձեռք բերելու ուղղությամբ:<br><br>9. Բանակցություններ են իրականացվել թարգմանչական ծրագրային ապահովումը գնելու վերաբերյալ:<br><br>10. Ձեռք է բերվել պայմանավորվածություն «Համահայկական կամավորական միություն» ՀԿ-ի հետ՝ կամավորների հավաքագրման գործընթացը կազմակերպելու համար:<br><br>11. Իրականացվել են բանակցություններ Մարզահամերգային համալիրի և Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հետ: Մոտ օրերս կկնքվեն պայմանագրեր:<br><br>12. Պորտուգալիայից փոստով ստացել ենք օլիմպիական գավաթը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 13. ԿԳՄՍ նախարարությունից ԵՊՀ-ին են հանձնվել օլիմպիադայի համար գնված դյուրակիր համակարգիչները և անհրաժեշտ պարագաները:<br><br>14. Օլիմպիադայի բացման և փակման հանդիսավոր արարողությունների համար միջազգային կոմիտեի գրասենյակից ուղարկվել է օլիմպիադայի մասնակից երկրների դրոշները: Աշխատանքներ են տարվում դրոշները մաքսազերծելու և փոստային բաժանմունքից ստանալու ուղղությամբ: Դրոշակաձողերը գնել է ԿԳՄՍ նախարարությունը և հանձնել ԵՊՀ-ին: |
| 2. | Տպագրություն | | | | |
| 3. | Կառավարչական ծախսեր | Ծրագրի անձնակազմի աշխատանքային պարտականությունների լրամշակում | Գործող կազմկոմիտե լրամշակված գործառույթներով | 31 դեկտեմբերի 2022թ. | Տրվել է աշխատավարձ: |

**Ծրագրի ղեկավար `** **Գայանե Ղուկասյան**